


Հ Ա Յ Ա Գ Ո Յ Ո Ո Ւ Թ Ա Տ

Զ Բ Ւ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐԱՎՈՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՆՈՐՄԱՆԵՐԸ

1-10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ



Լ Ո Ւ Զ Ր Ո Տ

Ա Ր Ե Վ Ա Ն

1940

1 MAR 2010

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ՀՈՒԽՈՂԿՈՄԱՏ

371.2

2-28

Vg.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐԱՎՈՐ
ԱԺԻԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՄԱՆ
ՆՈՐՄԱՆԵՐԸ

1—10-րդ ԴԱՍԱՐԱՆ



ՀՈՒԽՈՄԱՏ

ԵՐԵՎԱՆ

1940

Հայոց լեզվի գրավոր աշխատանքների գնահատման նորմաները կազմել է Հայկական ՍՍՌ ԼԺԿ-ի Ռւսուցիչների Կատարելագործման Գիտական-Մաթեմատիկական ինսիտուտը:

ԼԺԿ-ի ռւսումնա-մերոդոկան խորհուրդը ավել է իր հավանությունը:

Հաստատել է ՀՍՍՌ Լուսմոդկոմտի կողման 1940 թ. հոկտեմբերի 9-ին:



996
Կ/

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

ՍՍՌՄ ժողկոմսովետի և Համ. Կ(բ)Պ Կենտկոմի 1935 թ. սեպտեմբերի 3-ի որոշումը հրահանգում է. «ՍՍՌՄ բոլոր դպրոցների համար մշակել աշակերտների առաջադիմության գնահատման պարտադիր նորմաներ՝ այն հաշվով, որ գիտելիքների միենույն մակարդակը նույն ձևով գնահատվի բոլոր դպրոցներում»:

Գնահատման միասնական նորմաների կերպումը պետք է նպաստի հայոց լեզվի ավանդման որակը բարձրացնելուն և մտցնի միասնակություն՝ գրավոր աշխատանքների վերաբերյալ առաջադրվելիք պահանջների մեջ:

Միասնական նորմաները հանդիսանալու են միայն ընդհանուր հիմք աշակերտի առաջադիմության գնահատման գործում և ուսուցչին չեն աղատում յուրաքանչյուր աշակերտի գրավոր աշխատանքը գնահատելիս անհատական մոտեցում ցուցաբերելու պարտականությունից: Աշակերտի գրավոր աշխատանքը գնահատելիս ուսուցչը պարտավոր է հաշվի առնել ոչ միայն կատարված սխալների քանակը, այլև բնույթը. նա պետք է վերցնի գրավոր աշխատանքն ամբողջությամբ՝ իր բոլոր կողմերով:

Եթե կատարված սխալն ապացուցում է, որ աշակերտը չի յուրացը ել ուղղագրական ընդհանուր բնույթ կրող մի կանոն, մի ամբողջ շարք բառերի ուղղագրությունը, ապա ուսուցիչն ավելի խիստ մոտեցում է ունենալու, քան` երբ սխալը ցույց է տալիս միայն տվյալ բառի կամ սահմանափակ թվով բառերի գրությունը չիմանալը: Այսպես, եթե աշակերտը գրել է «ակռավ», ապա պարզ է, որ նա չգիտե միայն այդ բառի գրությունը. բայց եթե գրել է «նստարաներ», ապա այդ ապացույց է, որ նա չի յուրացը ել ուղղագրական մի այնպիսի կանոն, որի տակ մտնում են բազմաթիվ բառեր: Հասկանալի է, որ այս երկու սխալները հավասարազոր չեն և արժանի են տարբեր վերաբերմունքի:

Նույն ձևով՝ կատարված սխալների ուղղագրական տարբեր

կանոններին վերաբերվելը ապացույց է աշակերտի ձեռք բերած գիտելիքների անկայուն լինելուն, ինչպես որ կատարած սխալների մի տիպին պատկանելը ցույց է տալիս աշակերտի գիտելիքների մասնակի թերությունը:

Բացարձակ վրապումը, ավելի ու պակաս տառ գրելը, ջընջումները և այլն, չպիտի ազդեն գնահատականի վրա, եթե որոշակիորեն պատահական բնույթ են կրում, եղակի են. իսկ եթե դրանք կրկնվում են ընդհանուր բնույթ են կրում, ապա անշուշտ իջեցնում են գնահատականը:

Այս դրությունը իրավունք չի տալիս դասաւովին՝ ցանկացած ժամանակ սխալը հաշվել վրեպում և բարձր գնահատական նշանակել. այդպես կարելի է վարդել միայն՝ եթե սխալի վրեպուման բնույթ կրկն ակներկ է:

Հատկապես ավելի կարեոր է շարադրության սխաների ուշադիր ուսումնասիրությունը և մանրակրկիտ վերլուծումը, քանի որ գրավոր աշխատանքի այդ տիպը կապված է մի շարք յուրահատում սխաների հետ, իսկ բոլոր այդպիսի սխաները նաև սատեսել հնարավոր չեն:

Բոլոր այն դեպքերում, երբ կատարված սխաները «նորմաներով» նախատեսված չեն, պետք է ենթել այնտեղ արված ընդհանուր դրույթներից, կամ կոնկրետ գնահատականների համար («Ըատվ», «միջակ» և այլն) սահմանված նորմաների մանրակրկիտ անալիզից:

Այսպիսով նորմաները տալիս են որոշակի ցուցմունքներ միայն ընդհանուր բնույթ կրող, հաճախակի կատարվող սխաների վերաբերյալ Մամակի, չնախատեսված դեպքերում ուսուցիչն ինքը պիտի կարողանա ելք գտնել մնալով սակայն «նորմաներով» նախատեսված գնահատման սկզբունքների սահմանահրում:

1—4- Ր Դ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Ուղագրության ուսուցման և գրավոր խոսքի զարգացման համար գործադրում գործադրվում են գրավոր աշխատանքի բազմաթիվ տեսակներ: Բոլոր տեսակի գրավոր աշխատանքները հիմնականում ունենում են երկու բնույթ՝ ուսուցողական և ստուգողական: Ուսուցողական նպատակ հետապնդող գրավոր աշխատանքների ժամանակ ուսուցիչն աշխատում է ամեն կերպ կանոնել հավատական սխաները, դրա համար ձեռք է առնում բոլոր բարեկարգ գործությունների:

Հնարավոր միջոցները, նույնիսկ գրատախտակին գրում է զըժվագր գրություն ունեցող բառերը, օգնության է հասնում գծվարացող աշակերտին, պատասխանում է սովորողների հարցումներին և այլն: Մինչդեռ ստուգողական բնույթի կրող աշխատանքների ժամանակ դասաւուն ճգնում է, որքան կարելի է, աշակերտի յուրացման ճշգրիտ պատկերն ստանալ և ոչ միայն չի օգնում աշակերտին գրելու ժամանակ, այլև միջոցներ է ձեռք առնում, որ նա ուզի ոչ մի տեղից օգնություն չստանա և զրի միայն սեփական ուժերով:

Անվիճելի է, որ պետք է գնահատվեն աշակերտի կատարած բոլոր աշխատանքները. բայց ակներկ է նաև, որ ստուգողական և ուսուցողական աշխատանքները գնահատելիս միևնույն չափանիշով մոտենալ հնարավոր չէ:

Քանի որ ուսուցողական տիպի գրավորների ժամանակ մենք աշխատում ենք ամեն կերպ օգնել աշակերտին և կանխել հավանական սխաները, ապա գնահատելիս էլ անհամեմատ ավելի խիստ մոտեցում պիտի ցուցաբերենք, քան ստուգողական աշխատանքների ժամանակ, երբ աշակերտն ապավիճնում է միայն իր ուժերին և ոչ մի տեղից օգնություն չի ստանում:

Ստորև տրվող գնահատականները վերաբերում են ստուգողական բնույթի գրավոր աշխատանքներին, երբ ուսուցիչն առանց կանխապես վերլուծելու տեքստը, առանց հաղթահարելու գժվարությունները, առանց կանխիչ միջոցների գիմելու աշխատում է ստուգել իր սովորեցրած և աշակերտների կողմից արդեն մարզած ունակությունների յուրացման աստիճանը:

1. ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՏԱԽԱՆԱԿԻՑ ԵՎ ԳՐԻՑ

1. Արտագրությունը կարելի է կատարել թե գրատախտակից, թե գրքից: Գրաճանաչության սկզբնական շրջանում գրադասելի է արտագրությունը գրատախտակից:

2. Արտագրության տեքստը պիտի կազմված լինի կարևորագությանը՝ առաջին դասարանում 4—5, երկրորդ դասարանում 6—8 բառից:

3. Արտագրության տեքստը պիտի լինի նկարագրական կամ պատմողական բնույթի կապակցված մի հատված, կամ կազմված լինի առանձին նախաղառություններից:

Տեքստի մեջ եղած բոլոր բառերը, ինչպես և ամբողջ բովանդակությունը պիտի հասկանալի լինեն աշակերտներին:

2. ԹԵՂԱԿԱՆ ԹՅՈՒԽՆ

1. Թեղադրության ծավալը 1—4-րդ դասարաններում նույնն է, ինչ արտագրությանը, այսինքն՝ առաջին դասարանում 10—20 բառ, երկրորդ դասարանում՝ մինչև 45 բառ, երրորդ դասարանում՝ մինչև 60—65 բառ, չորրորդ դասարանում՝ մինչև 85—90 բառ: Բառերի քանակն ավելացվում է աստիճանաբար, ոչ միանգամից, այնպես, որ երրորդ քառորդի վերջում արդեն աշակերտները թեղադրություն գրեն իրենց դասարանի համար սահմանված ծավալով:

2. Թեղադրության տեքստը պետք է բավարար չափով հագեցված լինի սովորած ուղղագրական կանոններին վերաբերող գրություններով:

1-ին և 2-րդ դասարաններում տեքստի բառերի մոտավորապես 40% -ը պիտի ուղղագրական տեսակետից որոշ դժվարություն ներկայացնի, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 50% -ը:

Տեքստի նախադասությունները երկարաշունչ և խճողված չպիտի լինեն: Պիտի աշխատել որ նախադասությունները բաղկացած լինեն մոտավորապես 4—5 բառից՝ 1-ին դասարանում, 6—8 բառից՝ 2-րդ, 8—12 բառից՝ 3-րդ և 4-րդ դասարաններում:

3. Որպես թեղադրության տեքստ կարելի է վերցնել պատմողական ու նկարագրական բնույթ ունեցող ամբողջական հատվածներ, բայց տեքստը կարելի է կազմել նաև առանձին-առանձին նախադասություններից, որոնք, սակայն, խմբված պիտի լինեն որոշ թեմայի շուրջը: Տեքստի թե բովանդակությունը, թե բառերը հասկանալի պիտի լինեն աշակերտներին:

4. Նախադասությունների կառուցվածքը և ուղղագրական դժվարությունները պիտի համապատասխանեն տվյալ դասարանի ծրագրին:

Համաձայն ծրագրի, առանձին դասարանների թեղադրության տեքստերն իրենց մեջ պետք է պարունակեն հետևյալ գըժվարությունները. 1-ին դասարանում՝ մեծատարի գործածությունը նախադասության սկզբում և հատուկ անունների մեջ, երկրորդ դասարանում ավելացվում են երկնչյունների (յա, յո, յու, այ, ոյ, ույ, իա, իո, իու), «յ» ձայնակապի «ը» ձայնավորի ուղղագրությունը, գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը (բ—փ, գ—ք, դ—թ), երրորդ դասարանում կրկնվում են առաջին և երկրորդ

դասարաններում անցած նյութը և ավելացվում գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի ուղղագրությունը (ձ—ց, ջ—չ դ—խ, ը—ո), «ր»-ից հետո չարտասանվող «հ»-ի ուղղագրությունը, «ը» ձայնավորը բառասկզբում և «զդ», «ստ», «զբ», «շտ», «սկ», «սք», «սթ», «սփ» երկրադայններից առաջ և այլն:

Չորրորդ դասարանում կրկնվում և խորացվում են առաջին, երկրորդ, երրորդ դասարաններում անցած վերոհիշյալ ուղղագրական կանոնները և ավելացվում այն ուղղագրական կանոնները, որ ծրագրով նախատեսված են այդ դասարանում:

5. Ուսուցիչը պիտի թեղադրի գրական ճիշտ արտասանությամբ, առանց հուշողականության և աղավաղութմների: Սկզբում կարդում է ամբողջ տեքստը, ապա թեղադրում նախադասություն առ նախադասություն: Նախադասությունը երկար լինելու դեպքում կարելի է մասմաս թեղադրել: Ցուրաքանչյուր նախադասություն կամ բառախումբ պետք է կրկնել 1—2, բացառիկ դեպքերում 3 անգամ: Երկար նախադասության մասերը (բառախմբերը) գրելուց հետո նախադասությունն սկզբից մինչև վերջ նորից կարդացվում է: Թեղադրությունը գրել-վերջացնելուց հետո ուսուցիչը մեկ անգամ ևս կարդում է տեքստը, որի ընթացքում աշակերտներն ստուգում են աշխատանքը և հանձնում ուսուցչին:

ՍԻԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸԸ

1. Սիալ համարվում է ընդունված գրության յուրաքանչյուր խախտում, որ վերաբերում է տվյալ դասարանում կամ նախորդ դասարաններում սովորած ուղղագրական կանոններին:

2. Տողադարձի, մեծատարի, ավելորդ տառ գրելու, տառ բաց թողնելու, բառերը միացնելու, բառի մասերն անջատ գրելու, բառն աղավաղելու բոլոր դեպքերը հաշվի ենք առնում որպես տառասիալ:

3. Տվյալ կամ նախորդ դասարաններում անցած և յուրաքած կետադրական կանոնների խախտման բոլոր դեպքերը հաշվի ենք առնում որպես սիալ:

4. Միենույն սիալի մի քանի կրկնությունը համարում ենք մեկ սիալ (3 անգամ գրել է մարդիք, համարում ենք մեկ սիալ):

5. Եթե միենույն բառը մի քանի անգամ գրվել է ուղիղ, մի քանի անգամ սիալ, հաշվի ենք առնում որպես մի սիալ:

6. Տարբեր բառերի մեջ կատարած համանման սիալներից

յուրաքանչյուրը համարվում է առանձին մշակալ (մարթ, մարթ, կարքալ և այլն):

7. Մեկ տառն ուրիշով փոխարինելը, տառեւ կամ բառ մեր բաց թողնելը սխաջին և 2-րդ գասարաններում համարվում են սխալ իսկ 3-րդ և 4-րդ գասարաններում այդպիսի սխալը, չի ազդում գնահատականի վրա այն դեպքում, եթե գրավոր աշխատանքի մեջ այն տեղի է ունեցել մեկ անգամ և որոշակիորեն՝ կրում է վրիպման բնույթի:

8. Եթե աշակերտը միենույն բառի մեջ կատարել է մի քառական սխալ, և այդ սխալները կապված են ուղղագրական տարբեր կանոնների հետ, ապա այդ սխալները պիտի ընդունել որպես առանձին սխալներ: Օրինակ, ասենք, աշակերտը «միատեսակ» բառը տողադարձ է արել և գրել է «միատեսակ»: Աւսուցիչն այտեղ կատարած երկու սխալն էլ պետք է հաշվի առնի, որովհետև աշակերտն ապացուցել է, որ չգիտե տողադարձի կանոնը և «յ» ձայնակապի դորժածությունը: Իսկ եթե մի բառի մեջ կատարած սխալները կապված չեն ուղղագրական որոշ կանոնների հետ, այլ միայն բառապատճերի կամ տառի սխալ տեղադրման հետ, ապա գրանք պիտի հաշվել մի սխալ օրինակ՝ «արյուն» բառը գրել է «այրուն», «վայրկյան» բառը՝ «վարկայն», «անուրջ» բառը՝ «անհուրջ», «համբույր» բառը՝ «հանիվուր» և այլն:

9. Օժանդակ բայց նախորդ բառին միացնելու մի քանի դեպքերը համարում ենք մեկ սխալ:

10. Միենույն օժանդակ բայի մի քանի անգամ սխալ գրելը համարվում է մեկ սխալ, բայց տարբեր օժանդակ բայերի սխալները հաշվում ենք առանձին սխալներ: Օրինակ, եթե «է» օժանդակը բայը մի քանի անգամ գրված է «ե»՝ համարում ենք մի սխալ, բայց եթե «է»-ան գրվել է «ե», «հնք»-ը՝ «էնք», «հմ»-ը՝ «էմ»-ը՝ ապա համարում ենք 3 սխալ:

11. Իրեն սխալ հաշվի չենք առնում ուղղագրական և կետադրական այն խախտումները, որոնց կանոններն աշակերտները չեն անցել ոչ միայն տվյալ գասարանում, այլև նախորդ տարիներին:

12. Սխալ չպետք է համարել նաև, եթե աշակերտը որեւ բառ փոխարինել է մի ուրիշ բառով, որը սակայն չի աղավազում նախադասությունը, չի փոխում իմաստը:

Դեպքեր, երբ կարելի է բույլ տալ գնահատականի բարձրացում:

ա) Եթե աշակերտը «միջակ»-ի նորմայից մեկ սխալ ավելի է արել, բայց կատարված սխալները պատկանում են միենույն տիպին, ապա հնարավոր է նշանակել «միջակ»:

բ) Եթե սխալները կատարված են սակավ զործածվող բառների մեջ, որոնց գրությունը չի բխում աշակերտի սովորած ուղղագրական կանոններից, ուրեմն և կատարած սխալները կուպիտ չեն, ապա կարելի է «միջակ» նշանակել նույնիսկ այն դեպքում, եթե փաստական սխալների թիվը մեկով ավելի է սահմանված նորմայից:

Դեպքեր, որոնք իրավունք են տալիս ուսուցչին իջեցնելու գնահատականը:

ա) Եթե աշխատանքը կատարված է անփույթ, ձեռագիրը վատ է ու անընթեռնելի:

բ) Եթե զրավորի մեջ կան ջնջումներ, ուղղութեանը, որոնք ապացուցում են աշակերտի գիտելիքների անկայունությունը:

գ) Եթե աշակերտը կատարել է կոպիտ սխալներ, այսինքն՝ սխալ է գրել այնպիսի բառեր, որոնց ուղղագրությունը պարտավոր էր յուրացրած լինել:

ԴՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐՆ ԸՍՏ ԴԱՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ

1-ին ԴԱՍԱՐԱԿԱՆ

Թելադրության համար տրված տեքստի ծավալը սահմանվում է 1-ին կիսամյակում 5—14 բառ, այնուհետև բառերի թիվը աստիճանաբար ավելացնելով տարեվերջին պետք է հասցենել 20 բառի:

Գերազանց.—Նշանակվում է այն գեղագում, եթե թելադրությունը գրված է խնամքով ու անսխալ, չկան բացթողումներ ու ջնջումներ, պահպանված է տառերի համաշափությունը:

Լավ.—Նշանակվում է այն գեղագում, եթե թելադրությունը գրված է խնամքով, տառերը գրված են ճիշտ ու համաշափ, բայց արված է 1—2 սխալ:

Միջակ.—Նշանակվում է այն գեղագում, եթե թելադրությունը գրված է խնամքով, տառերը գրված են ճիշտ, բայց բավարար չափով չի պահպանված գրի համաչափությունը, և արված է 3 սխալ:

Վատ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է անխնամ, բառերը ճիշտ և համաչափ չեն գրված, արված է 4—5 սխալ:

Նաև վատ.—նշանակվում է այն դապքում, երբ աշխատանքը կատարված է միանգամայն անխնամ, տառերը ճիշտ և համաչափ չեն գրված, և արված է 5-ից ավելի սխալ:

2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Թելադրության տեքստի համար սահմանվում է՝ 1-ին կիսամյակում 20—30 բառ, իսկ 2-րդ կիսամյակում 30—45 բառ:

Գերազանց.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է խնամքով ու անսխալ չկան բացթողումներ ու ջնջումներ, տառերը գրված են ճիշտ ու համաչափ:

Լավ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է խնամքով տառերը գրված են ճիշտ ու համաչափ, բայց կատարված է 1—2 սխալ:

Միջակ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է խնամքով, տառերը գրված են ճիշտ, բայց բավարար չափով չի պահպանված գրի համաչափությունը, և արված է 3—4 սխալ:

Վատ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է անխնամ, տառերը ճիշտ ու համաչափ չեն գրված, և արված է 5—7 սխալ:

Նաև վատ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է միանգամայն անխնամ, տառերը ճիշտ և համաչափ չեն գրված, և կատարված է 7-ից ավելի սխալ:

3-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ ՆԵՐ

Թելադրության տեքստի համար սահմանվում է:

3-րդ դասարանում՝ 1-ին կիսամյակում 45—55 բառ, 2-րդ կիսամյակում 55—65 բառ, 4-րդ դասարանում՝ 65—75 և 75—90 բառ:

Գերազանց.—նշանակվում է այն դեպքում, երբ թելադրությունը գրված է առանց սխալների, չկան աղավաղումներ ու բացթողումներ, պահպանված է գրի համաչափությունը և թեքությունը:

Լավ.—նշանակվում է այն դեպքում, երբ թելադրությունը

գրված է խնամքով, բառերը գրված են ճիշտ ու համաչափ, բայց արված է 1—2 սխալ:

Միջակ.—նշանակվում է այն դեպքում, երբ աշխատանքը կատարված է խնամքով, բայց բավարար չափով չի պահպանված գրի համաչափությունն ու թեքությունը, և արված է 3—4 սխալ:

Վատ.—նշանակվում է այն դեպքում, երբ բավարար չափով չի պահպանված գրի թեքությունն ու համաչափությունը, և արված է 5—7 սխալ:

Նաև վատ.—նշանակվում է այն դեպքում, երբ չի պահպանված գրի համաչափությունն ու թեքությունը, ուղղագրական և կետադրական սխալները 7-ից ավելի են:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

3-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ ՆԵՐ

Շարադրությունը աշակերտների գրավոր խոսքի զարգացման հիմնական տեսակներից մեկն է:

Շարադրությունը հետապնդում է հետևյալ նպատակները.
ա) Սովորեցնել աշակերտներին գրավոր կերպով վերատադրել կարդացածի և լսածի բովանդակությունն առանց աղավաղման:

բ) Գրի առնել կարդացած տեքստի բովանդակությունը.

գ) Զարգացնել աշակերտների մեջ կարողություն՝ գրավոր ձևով հաղորդելու որևէ պատմվածքի էական մասերը, կառուցելու կանոնավոր նախադասություններ:

դ) Ընդարձակել երեխայի մտահորիզոնը և հարստացնել բառապաշտացը:

Ստուգողական շարադրությունը տրվում է այն նպատակով, որ կարելի լինի պարզել աշակերտի կարդացած պատմվածքն ինքնուրույն կերպով շարադրելու և խոսքը ճիշտ կառուցելու կարողության չափը, պարզել նրա ուղղագրական ունակության աստիճանը՝ ինքնուրույն աշխատանք կատարելու գեղքում:

Շարադրության համար ընտրված պատմվածքները պետք է կը են պատմողական բնույթ, լինեն բովանդակալից, հետաքրքիր, ըստ կառուցվածքի պարզ, ըստ տեղի կամ ժամանակի հետևղականորեն դասավորված:

Այս հողվածներում եղած նախադասությունների կառուց-

վածքը և բառերի ուղղագրությունը պետք է համապատասխան են տվյալ դասարանի քերականության դասընթացին։ Շարադրության համար ընտրված պատմվածքի ծավալը պետք է մեծ չլինի, որ աշակերտը հնարավորություն ունենա միանգամից ըմբռանել կարդացածի բովանդակությունը և կառուցվածքը։

Պատմվածքի մեջ եղած բառերը հասկանալի պետք է լինեն աշակերտին։

3 րդ և 4-րդ դասարաններում շարադրության համար գնահատական նշանակելիս դասատուն պետք է ելնի շարադրության համար նշված գնահատականների չափանիշներից՝ հաշվի առնելով շարադրության բովանդակությունը և շարահյուսական ու ուղղագրական սխալները։

Շարադրության ծավալը 3-րդ դասարանում պետք է լինի մոտ էջ, իսկ 4-րդ դասարաններում 1 էջ։

Գետօնց։—Նշանակվում է այն գեպքում, երբ բովանդակությունն արտահայտված է միանգամայն ճիշտ ու հաջորդական, չկան շարահյուսական սխալներ ու անհարթություններ, ոչ էլ ուղղագրական և կետադրական սխալներ։

Կտվ.՝ նշանակվում է այն գեպքում, երբ բովանդակությունը ճիշտ է արտահայտված, չկան շարահյուսական սխալներ ու անհարթություններ, բայց արված է 1—3 սխալ։

Միջակ.՝ նշանակվում է այն գեպքում, երբ բովանդակությունը ճիշտնականում ճիշտ է արտահայտված, բայց շարադրության մեջ չի պահպանված հաջորդականություն, և կատարված է շարահյուսական, ուղղագրական և կետադրական 4—5 սխալ։

Վաս.՝ նշանակվում է այն գեպքում, երբ բովանդակությունը ճիշտնականում ճիշտ չէ արտահայտված, կամ շարահյուսական, ուղղագրական և կետադրական 6—8 սխալ։

Շատ վաս.՝ նշանակվում է այն գեպքում, երբ աշխատանքը չի բավարարում «վատ»-ի համար սահմանված նորմային։

1-ին և 2-րդ դասարանների շարադրություններն իրենց բնույթով մոտենում են արտագրությանը կամ թելադրությանը, այդ պատճառով դրանք պետք է գնահատվեն որպես արտագրություն։

Ուղղագրական սխալների քանակը պետք է համապատասխանի թելադրության համար սահմանված նորմաներին, եթե շարադրության ծավալը տվյալ դասարանի համար ընդունված թելադրության ծավալից գերազանցում է, ապա համապատասխ-

իւան չափով պետք է բարձրացնել թույլ տրվելիք ուղղագրական սխալների քանակը։

Շարադրության համար զրվում է մեկ գնահատական, որ արտահայտում է թե բովանդակության ճիշտ վերաբարտադրումը, թե ուղղագրական և շարահյուսական սխալները։

Եթե շարադրության առանձին կողմերի որակի միջև գոյրժուն ունի խիստ տարբերություն, օրինակ՝ բովանդակությունը լավ է հաղորդված, իսկ ուղղագրությունը վատ, ուսուցիչը գնահատականի կողքին գրավոր ծանոթություն է տալիս՝ բնութագրելով շարադրության առանձին կողմերը։

Ուղղագրորեն անգրագետ զրված շարադրությունը չի կարող գնահատվել «միջակ», եթե նույնիսկ բովանդակության և շարահյուսական տեսակետից միանգամայն արժանի է դրան։

Ինչպես զրավոր աշխատանքների մյուս տեսակների, այդպես նաև շարադրության գնահատման ժամանակ հաշվի է առնվազում ձեռագրի որակը և աշխատանքի կատարման ճշտապահությունը։

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱՐՄԱՆԵՐԸ

5—10-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Թելադրությունների միջոցով աշակերտաների ուղղագրական և կետադրական գրագիտությունը ճշտորեն հաշվառման ենթարկելու նպատակով անհրաժեշտ է ուղղագրության առնել ինչպես սխալների քանակն ու բնույթը, այնպես էլ թելադրության տեքստի բնույթը և ծավալը։

Որպեսզի կարելի լինի դպրոցներում անցկացրած թելադրությունների արդյունքները համեմատել միմյանց հետ, անհրաժեշտ է թելադրությունների ծավալի նկատմամբ սահմանել միօրինակություն։

Թելադրությունների մեջ նորմալ պետք է համարել բառերի հետեւյալ քանակը։

5-րդ դասարան 85—100 բառ

6-րդ » 100—130 »

7-րդ » 130—150 »

8-րդ » 150—170 »

9-րդ » 170—185 »

10-րդ » 150—200 »

Բառերի քանակը հաշվելու ժամանակ շաղկապները, կապերը (անջատ գրվող) և օժանդակ բայերը պետք է ընդունել որպես առանձին բառեր:

Այս նորմաներն ուսուցչի կողմից կիրառվում են ոչ միանգամից, այլ հետզետեւ: Տարեսկզբի թելադրությունը կազմվում է նախորդ տարվա նորմաներով, ապա յուրաքանչյուր քառորդում ավելացվում է մոտավորապես այնքան բառ, որ երկրորդ քառորդի վերջում թելադրության ծավալը հասնի վերը հիշված նորմային:

Որպեսզի թելադրությունների արդյունքները դառնան համեմատելի և աշխատանքների գնահատականը միօրինակ, տեքստ ընտրելու ժամանակ հարկավոր է առաջնորդվել հետևյալ դրույթներով.

1. Թելադրության տեքստի բովանդակությունը պետք է միանգամայն հասկանալի և ըմբռնելի լինի աշակերտությանը:

2. Թելադրության բոլոր բառերը պետք է հասկանալի լինեն աշակերտներին, շարահյուսությունը պետք է համապատասխանի աշակերտների խոսքի զարգացման աստիճանին:

3-րդ դասարանում հանձնարարվում է տալ այնպիսի տեքստ, որը կազմված լինի մեծ մասամբ պարզ նախադասություններից, կամ հասարակ տիպի բարդ նախադասություններից:

4-րդ դասարանում՝ կառուցվածքի տեսակետից՝ տեքստը բարդանում է (համաձայն տվյալ դասարանի ծրագրի):

7-րդ դասարանում, ըստ ծրագրի, տեքստում պետք է լինեն մեծ թվով բարդ նախադասություններ, առանձին դարձվածքներ և խառն կառուցվածքով նախադասություններ, սակայն այստեղ ևս չպետք է լինեն երկարաշունչ և խճողված նախադասություններ:

3. Ստուգողական թելադրությունների համար պետք է ընտրել կամ կապակցված հատվածներ՝ պատմողական բնույթի նկարագրական էլեմենտներով (7-րդ դասարանում ուղիղ խոսքն անցնելուց հետո նաև երկախոսության էլեմենտներով), կամ առանձին նախադասություններ, սակայն հնարավորության սահմանափակում կապված որևէ թեմայի հետ:

4. Ստուգողական թելադրության տեքստը պետք է ընտրել այն հաշվով, որ՝

ա) լինեն նոր անցած ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր կանոնից սի քանի գեպք, որոնց յուրացումը ենթակա է ստուգման:

բ) Անդրադարձված լինեն նախապես անցած ուղղագրական կետադրական այն կանոնները, որոնք ունեն կարեռ նշանակություն տվյալ դասարանի համար և որոշ դժվարություն են ներկայացնելու:

Դժվարություն չեն համարվում այն գեպքերը, որոնք կապված են նախորդ դասարաններում ծրագրով անցած և արդեն յուրացված կանոնների հետ:

7—10-րդ դասարանների թելադրության տեքստը թե ծավալի և թե դժվարության աստիճանի տեսակետից տարբերվում է 5—6-րդ դասարանների թելադրության տեքստից, Այս դասարանների աշակերտներն արդեն պետք է իմանան ուղղագրության ու կետադրությանը վերաբերող բոլոր կանոնները. ուստի պետք է ընտրել այնպիսի տեքստ, որը բավարար չափով հագեցված լինի ուղղագրական դժվարություն ունեցող բառերով և կետադրության նշաններով:

Մանօրություն.—Թելադրության մեջ տեղ չպետք է գտնեն այնպիսի կանոններ, որ չեն անցել տվյալ կամ նույնորդ դասարաններում:

5. Տեքստի թելադրումն անպայման պետք է լինի ճիշտ գրական արտասանությամբ, առանց հուշողականության և աղավաղման:

Եթե թելադրվում է կապակցված տեքստ, ապա սկզբում ուսուցիչը կարգում է ամրող տեքստը, ըստ հնարավորին արտահայտիչ ձևով. այնուհետև կարգում է առաջին նախադասությունը, որի ժամանակ աշակերտները դեռ չեն գրում: Դրանից հետո ուսուցիչը թելադրում է նախադասության առանձին կապակցված կտորները՝ 2—5 բառից բաղկացած. աշակերտները լուս կրկնում են ստքներում և սկսում են գրել: Աշակերտների գրելու ընթացքում այդ բառախմբերը պետք է կրկնել 1—2^o անհրաժեշտ դեպքում միայն 3 անգամ:

Թելադրության վերջին նախադասությունը գրելուց հետո թելադրության տեքստն ուսուցիչ կողմից նորից ամբողջությամբ դանդաղ կարգացվում է, որի ընթացքում աշակերտներն ստուգում են իրենց աշխատանքները: Դրանից հետո աշխատանքները հավաքվում են:

Անձանոթ բառերը, եթե թելադրության մեջ նրանցից չեն կարևոր աշխատանքներ, նախորդը բացատրվում և գրվում են գրատախատելին:



ՍԻԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Թելաղբության մեջ յուրաքանչյուր ուղղագրական և կհտադրական կանոնի կամ ընդունված բառապատկերի խախտումը պետք է հաշվել որպես սխալ, եթե մինչև թելադրություն գրելը աշակերտներն այն արգեն սովորել են: Այստեղ նկատի է առնվում ոչ միայն դասարանում տվյալ տարրվա անցածը, այլև նախընթաց ուսումնական տարիներում ծրագրով անցած նյութը:

Այսպես, օրինակ՝ 5-րդ դասարանի 1-ին քառորդում հաշվի են առնվում ոչ միայն ձեռաբանության և բառակազմության թեժային վերաբերող քերականական սխալները, որ անցնում են այս դասարանում 1-ին քառորդի ընթացքում, այլև տարրական դպրոցի քերականության ծրագրի բոլոր բաժիններին վերաբերող սխալները, օրինակ՝ գոյականների հոլովական վերջավորությունների ուղղագրությունը և այլն:

Բացի դրանից, 5-րդ դասարանում պետք է հաշվի առնել նաև կհտադրական այն սխալների գեպքերը, որոնք անցել են նախորդ դասարաններում՝ ստորակետը խոսքի բազմակի մասերի, համազոր անդամների միջև, բոլոր թվարկության ժամանակ, վերջակետը, բացականչական և հարցական նշանները, ստորակետը բարդ նախադասության մեջ, որի մասերը միացած են միմյանց հետ «իսկ», «բայց» շաղկապներով, չակերտի գործածության որոշ գեպքերը և այլն:

6-րդ և 7-րդ դասարաններում ևս նույնպես հաշվի են առնվում ինչպես այդ դասարաններում ուսումնասիրվող, այնպիս էլ նախորդ դասարաններում անցած ուղղագրության և կհտադրության բաժիններին վերաբերող սխալները:

2. Տողադրձի, մեծատառի սխալները, տառ բաց թողնելու, ավելորդ տառ գրելու, տառերի սխալ տեղադրման, բառերի աղավազման, բառերի միացման, բառի մասերն անջատ գրելու բոլոր դեպքերը համարվում են ուղղագրական սխալ:

3. Ուղղագրական և կհտադրական այն սխալները, որոնց կանոնները դեռ չեն անցել, չեն աղդում գնահատականի վրա:

4. Եթե աշակերտը միենույն բառի մեջ կատարել է մի քանի սխալ, և այդ սխալները կապված են ուղղագրական տարրեր կանոնների հետ, ապա այդ սխալները պետք է ընդունել որպես առանձին սխալներ: Օրինակ, ասենք, աշակերտը «հիմնալ» բառը տողադրձ է արել և գրել է «հիմնալ»:

Կատարած երկու սխալներն էլ պետք է հաշվի առնի, որովհետև աշակերտն աղացուցել է, որ ինքը չփափ տողադրձի կանոնը և յօյ ձայնակապի գործածությունը: Իսկ եթե մի բառի մեջ կատարած սխալները կապված չեն ուղղագրական որոշ կանոնների հետ, այլ միայն բառապատկերի կամ տառի սխալ տեղադրման հետ, ապա գրանք պետք է հաշվել մի սխալ օրինակ, «աշխարհ» բառը գրել է «ախշարհ», կամ «ամբարտակ» բառը գրել է «ամպարշակ»:

5. Տարրեր բառերի մեջ կատարված միենույն տիպին պատկանող սխալներից յուրաքանչյուրը համարվում է առանձին սխալ: Օրինակ՝ եթե թելադրության մեջ աշակերտը գրել է «զարբարել», «բարբություն», «երրում», ապա հաշվում է երեք սխալ:

6. Սխալ չպետք է հաշվել տառ բաց թողնելը կամ տառ ավելացնելը, եթե գա պատահական բնույթ է կրում, «գրչի սխալ» է, իսկ եթե բառը չփափենալու հետևանք է, կամ տվյալ աշակերտի համար այդ բանը պատահական բնույթ չի կրում, ապա պետք է հաշվի առնել և սխալ համարել:

7. Միենույն սխալի կը կնությունը պետք է համարել մեկ սխալ:

8. Օժանդակ բայց կից գրության բոլոր դեպքերը համարվում են մեկ սխալ:

9. Գրելիք բառի տարբերությունը տեքստում և աշակերտի տեքտում, եթե բառն ունի ուղղագրական երկու ձեփ գրություն, հաշվի չի առնվում:

10. Սխալ չպետք է համարել մի բառի փոխարինումը նույն բառի մի այլ բառաձեռվ, կամ մի այլ բառաձեռի փոխելը արտասանությամբ մոտ և թելադրության բնագրի բառի իմաստին համապատասխան ուրիշ բառի, եթե նախադասությունը չի աղավազման պատճեն է աղավազման պատճեն:

11. Կհտադրական սխալ չպետք է համարել, եթե աշակերտը շաղկապ չունեցող համադասությունները բաժանելու համար միջակետի փոխարինեն վերջակետ կամ ստորակետ է գրել, կամ բութը փոխարինել է ստորակետով: Սխալ չի կարելի հաշվել նաև այն կհտադրությունը, որը թեև չի համապատասխանում տեքստին, բայց կապված է գրողի մտածության հետ և չի հակասում շարահյուսական և կհտադրական կանոններին:

12. Եթե պահանջվում է որևէ բառ կամ միջանկալ նախա-

դասություն երկու կողմից բաժանել ստորակետերով, իսկ աշաւ կերաը գրել է միայն մի ստորակետ, կամ բոլորովին ստորակետ չի գրել ապա մեկ կամ երկու ստորակետի բացակայությունը պետք է համարել մեկ սխալ: Եթե բառը կամ նախադասությունը չպետք է առնել ստորակետերի կամ չակերտների մեջ, իսկ աշաւ կերտն առել է, ապա այդ երկու կետի սխալը նույնպես պետք է համարել մեկ սխալ:

13. Կետադրական կոպիտ սխալ պիտի համարել, եթե շարանյուսությունն ավարտած աշակերտը ոչ մի կետով չի բաժանում շաղկապ չունեցող համազոր նախադասությունները, ստորակետ չի դնում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև, ստորակետով բաժանում է որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը, ենթական ու ստորոգրյալը, ստորոգրյալն ու իր լրացումները:

14. Միենառյան օժանդակ բայի մի քանի անգամ սխալ գրելը համարվում է մեկ սխալ, բայց տաշբեր օժանդակ բայերի սխալ գրությունները համարվում են առանձին սխալներ: Օրինակ՝ եթե «է» օժանդակ բայը հինգ անգամ գրվել է «հ», հաշվվուի է մեկ սխալ, բայց եթե «է»-ն գրվել է «հ», «եք»-ը՝ «էք», «եմ»-ը՝ «էմ», ապա հաշվում ենք 3 սխալ:

15. Կոպիտ սխալ պետք է համարել շատ գործածական բառերի սխալ գրությունը և խախտումը ուղղագրական այն կանոնների, որոնք արդեն ուսումնասիրվել և յուրացվել են և տվյալ դասարանի համար ոչ մի դժվարություն ներկայացնել չեն կարող:

16. Ոչ կոպիտ սխալների շարքը պետք է դասել.

ա) Այնպիսի բառերի գրությունը, որոնք սակավ գործածելի են և ուղղագրական որոշակի կանոնի հետ կապված չեն:

բ) Որոշ հարադիրների («մի քանի», «անցկացնել», «գործածել» և այլն) միասին կամ անջատ գրելը:

գ) Որոշ բայերի ստորակետով անջատելը կամ առանց ստորակետի գրելը («գալիս տեսնում է», «գնա, տես», «վերկաց, զնա», «ըրեր տեսնեմ» և այլն):

դ) «բույն», «բույժ», «աշխույժ», «քնքույշ», «գույժ», «գույժ», և նման մի քանի բառերի առանց «յ» գրելը:

ե) Ժողովրդական-բարբառային բառերի գրության տարբերությունը տեքստից, եթե գրանք տարբեր ձևով են գրվում տարբեր գրողների ձևու (ախչի, տիպեր, ճամփա և այլն):

զ) Ուրիշ լեզուներից վերցրած բառերի գրության տարբերությունը տեքստից, եթե գրանք գործածական չեն գրական լեզվի մեջ և կայունացած ուղղագրություն չունեն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

5—7-րդ դասարանների համար սահմանվում են միևնույն նորմաները, քանի որ գնալով մեծանում է տեքստի ծավալը և բարդանում է տեքստը՝ ուղղագրական և կետադրական դժվարությունների հագեցվածության տեսակետից:

Նկատի ունենալով, որ հիմնականում լեզվի ուսուցումն ավարտվում է 7-րդ դասարանում, և VIII—X դասարաններում միայն ժամանակավորապես է ավանդվում լեզուն, ուստի 8, 9 և 10-րդ դասարանների նորմաները տրվում են առանձին:

5—7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գիրազմեց.—Նշանակվում է այն դեպքում, երբ թելագրության մեջ չկա ոչ մի ուղղագրական և ոչ մի կետադրական սխալ:

Լավ.—գնահատվում է այն թելագրությանը, որի մեջ արված է մեկ ուղղագրական և 2—3 կետադրական սխալ, կամ 2 ուղղագրական և մեկ կետադրական սխալ:

Միջակ.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ արված է 3 ուղղագրական և 4 կետադրական սխալ:

Վաս.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կա 4—6 ուղղագրական և 5—7 կետադրական սխալ:

Նաև վաս.—գնահատվում է այն թելագրությունը, որը չի բավարարում «վաս» գնահատականի համար սահմանված պահանջին:

8—9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Գիրազմեց.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ չկա ոչ մի սխալ:

Լավ.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կատարված է մեկ ուղղագրական և 2 կետադրական սխալ:

Միջակ.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կատարված է 2 ուղղագրական և 3 կետադրական սխալ:

Վաս.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կա 3—6 ուղղագրական և 4—6 կետադրական սխալ:

Նաև վաս.—գնահատվում է այն թելագրությունը, որը չի բավարարում «վաս» գնահատականի համար սահմանված պահանջին:

Գերազանց.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ չկա ոչ մի սխալ:

Լավ.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կա մեկ ուղղագրական և 2 կետագրական սխալ:

Միջակ.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կա 2 ուղղագրական և 2 կետագրական սխալ: Ուղղագրական սխալների թիվը ավելի պակաս լինելու դեպքում ուղղագրական և կետագրական սխալների ընդհանուր քանակը 5-ից չպետք է անցնի:

Վաս.—գնահատվում է այն դեպքում, երբ ընդհանուր առամբ կատարված է 6—9 սխալ իսկ եթե ուղղագրական սխալների թիվը 4-ից պակաս է՝ 10 սխալ:

Ետական վաս.—գնահատվում է այն թելագրությունը, որի մեջ կատարված սխալներն ավելի են, քան սահմանված է «վատ» գնահատականի համար:

ԴԵՂՔԵՐ, ԵՐԲ ԿԱՐԵԼԻ Է ԹՈՒՅԼ ՏԱԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

1. Եթե աշակերտը միևնույն ուղղագրական կամ կետագրական կանոնների վերաբերյալ կատարել է մի շարք սխալներ (3 և ավելի), ապա նման աշխատանքը գնահատելու ժամանակ կատարված փաստացի սխալների թիվը կարելի է պակաս ընդունել: Օրինակ՝ ձեւաբանության կուրսը վերջացնելուց հետո կրկնողական ընդույթ ունեցող թելագրության մեջ 6-րդ դասարանի աշակերտը կատարել է 2 ուղղագրական սխալ որոնք վերաբերում են քերականական կուրսի նույն բաժնին:

Զնայած սխալների թիվը գերազանցում է «լավ» գնահատականի համար սահմանված նորմային, բայց դաստուն նման դեպքում կարող է նշանակել ոչ թե «միջակ», այլ «լավ» որովհետև աշակերտն ըստ էռթյան հայտաբերել է ուղղագրական մեկ կանոնի չշիտենալը:

2. Եթե աշակերտն աշխատանքի մեջ կոպիտ սխալ չի կատարել, այսինքն՝ թելագրության մեջ կան այնպիսի սխալներ, որոնց կանոնները թեև որոշակի կերպով զբար էն դպրոցական դասագրերում, սակայն այդ կանոնների վերաբերյալ տպագրական պրակտիկայում ընդունված են որոշ շեղումներ:

Այսպիսի սխալների շարքը պիտի դասել ուրիշ իրութեղիս

չակերտներով կամ զծելով բաժանելը շփոթելը, «Բարզենը» «Բարկեն» գրելը և այլն:

Ոչ կոպիտ սխալների շարքը պիտի է դասել հազվագյաւտ բառերի մեջ կատարած սխալները, օրինակ՝ «աղջամուղջ», «նախշուն», «սրախողխող», «խավարչտին», և այլն:

Եթե 7-րդ դասարանի աշակերտը թելագրության մեջ կատարել է 3 ուղղագրական սխալ, բայց այնպիսի բառերի մեջ, որոնք աշակերտի համար սակավ գործածելի են, ապա դաստուն այդ հանգամանքը հաշվի առնելով կարող է նշանակել «լավ», եթե կետագրական սխալներ չկան:

Եթե թելագրությունն ընդհանրապես գրագետ է զրված, չկան ավանդական և քերականական, ինչպես նաև կետագրական կոպիտ սխալներ, բայց կան «միջակ»-ի նորմայից ավելի միայն բարբառացին կամ միայն հնչյունային տիպի սխալներ, ապա կարելի է աշխատանքը գնահատել «միջակ», քանի որ աշակերտը ցուցաբերել է ուղղագրական մասնակի թերություն և ոչ թե անգրագիտություն:

ԴԵՂՔԵՐ, ՈՐՈՇ ԿԱՐՈՂ ԵՆ ԱԶԴԵԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎՐԱ
ԻԶԵՑՆԵԼՈՒ ԻՄԱՍՏՈՎ

1. Աշխատանքը կատարվել է անփույթ, բառելը զրվել են անընթեռնելի:

2. Աշխատանքի մեջ կան շատ ուղղումներ (չնջումներ, շըտկումներ), որ ապացուցում է, թե աշակերտի գիտելիքները կայուն չեն:

3. Աշակերտը թույլ է տվել կոպիտ սխալներ, այսինքն՝ կատարված սխալները վերաբերում են ուղղագրական և կետագրական այն կանոններին, որ աշակերտներն անցել ելուացը են գաղուց, և տվյալ դասարանի աշակերտների համար զրանք չեն կարող առանձին դժվարություն հանդիսանալ: Օրինակ՝ 5-րդ դասարանի աշակերտը «թանաքաման» բառի հոգնակին զրել է «թանաքամաներ»՝ փոխանակ՝ «թանաքամաններ», «ըսկսեց երգել»՝ փոխանակ՝ «սկսեց երգել» և այլն:

Այդպիսի աշխատանքը կարելի է սվատ» գնահատել, եթե նույնիսկ սխալների ընդհանուր քանակը չի գերազանցում «միջակ» գնահատականի համար սահմանված նորմային:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

5-7-րդ ԴԱՍԱՐԱՆ

Շարադրության համար ընտրված տեքստն իր բովանդակությամբ, բառերի ու շարահյուսության տեսակետից պետք է բավարարի նույն պահանջներին, ինչ թելադրությունը, և բովանդակության տեսակետից լինի աշակերտների համար միանգամայն մատչելի:

Տեքստում եղած բոլոր բառերը պետք է հասկանալի լինեն աշակերտներին: Շարահյուսությունը պետք է համապատասխանի աշակերտների լեզվի զարգացման մակարդակին:

Շարադրության ծավալը միջին հաշվով պետք է լինի 5—6-րդ դասարաններում 1-ից մինչև 1 և կես էջ, իսկ 7-րդում՝ 1 և կեսից մինչև 2 էջ:

Շարադրությունը գնահատելու ժամանակ հաշվի է առնվում.

1. Բովանդակությունը ճիշտ և կանոնավոր հաղորդելը և շարադրելու հետեւղականությունը, հաջորդականությունը:

2. Բառերի ընտրությունը և նախադասությունների կառուցվածքը, նախածանցների և վերջածանցների գործածությունը, բառերի տեղին գործածելը, համաձայնությունը, բառերի դասավորումը, բառերի կարգը նախադասությունների մեջ, առանձին հատվածների ճիշտ կառուցումը, բարդ նախադասությունների, ուղղակի և անուղղակի խոսքի կառուցումը և այլն: Բացի այդ, ուշադրության են առնվում աշխատանքի ոճական արժանիքները (կառուցվածքի և բառերի հարստությունը կամ միօրինակությունը, բառերի և դարձվածքների հաջող կամ անհաջող օգտագործումը, լեզվի, արտահայտությունների սլատկերավորությունը, համանիշների և նույնանիշների հաջող դորձածությունը և այլն):

3. Ուղղագրական և կետադրական սխալների բնույթն ու քանակը: Շարադրությունները գնահատելու ժամանակ պետք է առաջնորդվել հետեւյալ նորմաներով:

5-7-րդ ԴԱՍԱՐԱՆ

Գերազանց.—նշանակվում է այն գեպքում, երբ՝

ա) Տեքստի բովանդակությունը զրված է ճիշտ՝ առանց սխալների, անձտությունների և էական խնդիրները բաց թողնելու, փաստերը և մտքերը արված են ճիշտ, կանոնավոր և հաջորդականությամբ;

բ) Բառերի ընտրության և նախադասությունների կառուցման մեջ սխալներ չկան:

գ) Ուղղագրական սխալներ չկան, կետադրական սխալների թիվը 2-ից ավելի չէ:

դ) Խոսքը տվյալ դասարանի համար բավարար չափով պատկերավոր է:

Լավ.—գնահատվում է այն աշխատանքը, որի մեջ՝

ա) Տեքստի բովանդակությունը գրված է ճիշտ, առանց աղավաղումների և էական կետեր բաց թողնելու, փաստերի և մըտքերի հաջորդականությունը արված է ճիշտ և կանոնավոր:

բ) Բառերի ընտրության և նախադասությունների կառուցման մեջ կատարվել է 2-ից ոչ ավելի սխալ:

գ) Ուղղագրական սխալների թիվը 1-ից, իսկ կետադրական սխալների թիվը 3-ից ավելի չէ:

Միջակ.—գնահատվում է այն աշխատանքը, որի մեջ՝

ա) Բովանդակությունը հիմնականում արված է ճիշտ, բայց կան մանրամասնությունների որոշ անձտություններ, հաջորդականությունը պահպանված է:

բ) Բառերի ընտրության և նախադասությունների կառուցման սխալների թիվը 3-ից ավելի չէ:

գ) Ուղղագրական սխալների թիվը 2-ից, իսկ կետադրական սխալների թիվը 4-ից ավելի չէ:

Վատ.—գնահատվում է, եթե՝

ա) Բովանդակության հաղորդման մեջ կան 1—2 այնպիսի սխալներ, որոնք շարադրության իմաստն աղավաղում են (դեպքերի հաջորդականությունը կամ իմաստը խմիւղել է 1—2 տեղ):

բ) Բառերի ընտրության և նախադասության կառուցման մեջ կատարվել է 4—6 սխալ:

գ) Ուղղագրական և կետադրական սխալների թիվը չի անցնում թելադրության «վատ» գնահատականի համար սահմանված նորմայից:

Շատ վատ.—գնահատվում է այն աշխատանքը, որի մեջ բովանդակությունն աղավաղված է, կամ մտքերի անկապությունն, կատարված են 6-ից ավելի բառերի ընտրության, նախադասությունների կառուցման սխալներ, ուղղագրական և կետադրական սխալներն ավելի են, քան սահմանված է «վատ» գնահատականի համար:

Շամբը ություն.—1. Շարադրության գնահատման համար սահմանված որեւէ կողմին նորման խախտվելու գեպքում համապատասխան ձևով իջնում է գնահատականը՝ Օրինակ՝ բովանդակության հազարդման և բառերի ընտրության ու նախադասության կառուցման որակը համապատասխանում է «միջակի», բայց ուղղագրական ու կետադրական սխալների թիվը բարձր է «միջակի» համար սահմանված նորմայից, կամ ընդհակառակն՝ գրավորը գնահատվում է «ժամա»:

2 Կարելի է բարձրացնել գնահատականը, եթե աշխատանքն աչքի է ընկնում լավ ոճով, լեզվի պատկերագրությամբ և այլն:

3. Գնահատականը պետք է իջեցնել եթե աշխատանքը դրված է անփոյթ և անընթեռնելի:

4. Եթե շարադրությունն ավելի մեծ ծավալ ունի, քան նախատեսված է նորմաներով, համապատասխան չափով բարձրացվում են նաև սխալների նորմաները և ընդհակառակն:

Բ. ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

8-10-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դասարանական ստուգողական շարադրությունները հանդիսանում են դպրոցական դասընթացի գրական նյութի յուրացման աստիճանն ու խորությունն ստուգելու միջոցներից մեկը: Աշխատանքը գնահատելիս անհրաժեշտ է ուշադրության առնել ինչպես բովանդակությանը վերաբերող պահանջները, այնպես էլ շարահյուսական, ուղղագրական և կետադրական տեսակետից գրագիտության աստիճանը:

Դրական բնույթի դասարանական շարադրությունների թեմաները պետք է վերցնել գերազանցապես ծրագրային նյութերից: Թեմայի ձեռակերպումը պետք է լինի պարզ և մատչելի. չի կարելի տալ անորոշ, խճված ձեռակերպում, որը կարող է ստանալ տարբեր աշակերտների մոտ տարբեր մեկնաբանություն: Թեմաները պետք է լինեն կոնկրետ, աշակերտներն իրենց շարադրություններում պիտի զրակորեն իրենց՝ ինչպես բուն գրական նյութին, նույնպես և գրական փաստերին գիտակ լինելու աստիճանը և ոչ թե տան ընդհանուր, երբեմն էլ բուն նյութի մասին ոչինչ չասող վերացական դատողություններ:

8-րդ ԴԱՍԱՐԱՆ

8-րդ դասարանի գրավոր աշխատանքները պետք է սերտ կերպով կապված լինեն գրական երկերի բովանդակության հետ և հիմնված լինեն տեքստի ուշադիր օգտագործման վրա, ուստի

անհրաժեշտ է, որ աշակերտներն իմանան ուսումնասիրված գրական երկի տեքստը:

Այս դասարանում կարելի է տալ մոտավորապես հետեւյալ տիպի շարադրություններ:

ա) Երկի կամ նրա մի մասի (ամբողջություն կազմող) բովանդակության կապակցված շարադրումը (օրինակ՝ «Սասունցի Դավթի և Մորա Մելիքի կոկը»):

բ) Պարզ բնութագրություններ՝ վերլուծական և ընդհանրացման էլեմենտներով (օրինակ՝ «Միկիտան Սաքոյի բնութագրը», «Պեպոյի ընտանիքը»).

գ) Կենցաղի բնութագրում, բնության նկարագրություններ (օրինակ՝ «Բարեկենդանն Աշտարակում» («Հացի խնդիր»), «Ձմռան նկարագրությունը» («Վերք Հայսատանի»)):

9-րդ ԴԱՍԱՐԱՆ

9-րդ դասարանի շարադրությունների թեմաներն արգենպետք է կրեն գերազանցորեն վերլուծական բնույթ և մեծ մասամբ հիմնվեն կոնկրետ երկի, երբեմն էլ հեղինակի մի շարք երկերի վերլուծության վրա: Այս դասարանում աշակերտները պետք է հայտարերեն նյութի ընդհանրացման կարողություն:

9-րդ դասարանի շարադրությունների մոտավոր տիպերը կլինեն:

ա) Կերպարի (օբրաղ) դարգացման վերլուծությունը մի երկի մեջ (օրինակ՝ «Վարդան Ահրումյանի բնութագրիը»).

բ) Մի երկի մի քանի գործող անձերի վերլուծությունը՝ համեմատական բնութագրումը («Հայրապետի և Բարխուղարի համեմատական բնութագրիը») («Նամուռ»).

գ) Երկի հիմնական գաղափարներին վերաբերող վերլուծական բնույթի զանազան շարադրություններ («Դյուղը Փափազյանի երկերում», «Դյուղական կենցաղի նկարագրությունը «Աշուշաց»-ում և այլն).

դ) Երկի կոմպոզիցիային կամ լեզվին ու ոճին վերաբերող շարադրություններ (օրինակ՝ «Սպանված աղավնու» կոմպոզիցիան):

ե) Պրոբլեմատիկայի, այուժեկի, հեղինակի պրիոմների վերլուծությունը և այլն:

10-րդ ԴԱՍԱՐԱՆ

10-րդ դասարանի շարադրությունները կրելու են նույն բնույթը, ինչ 9-րդ դասարանինը, միայն այստեղ տրվելու են

ավելի խորացված ձևով: Այս դասարանի աշակերտները պետք է կարողանան վերլուծել, ընդհանրացնել և քննադատորեն գնահատել գրական փաստերը:

Բացի 9-րդ դասարանում արվող շարադրությունների տիպերից, որոնք շարունակվում են նաև այս դասարանում, արվելու են նաև այնպիսի շարադրություններ, որոնք ընդգրկում են հեղինակի մի շարք երկերը, կամ գրողի գրական գործունեության որոշ շրջանը (օրինակ՝ «Ստեփան Զորյանի նախառեղուցիոն շրջանի գրվածքները»), կամ ամբողջական երկի ինքնուրույն վերլուծություն, որով կարելի կլինի պարզել աշակերտների գրական երկը հասկանալու ունակությունները:

Բացի ծրագրային նյութերից բխող վերոհիշյալ թեմաներից, 8-10-րդ դասարաններում կարելի է հանձնարարել նաև հասարակական-հրապարակախոսական բնույթի թեմաներ, («Սովետական հայրենասիրությունը», «Սովետական հերոսների ոգեգորության աղբյուրները» և այլն):

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐՆ ՈՒ ՍԽԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ստուգողական շարադրության թեման հաղորդվում է աշակերտներին գրելու ժամին. նախապես հայտնել չի կարելի:

Թեման կամ թեմաները (եթե մեկից ավելի են) գրվում են գրատախտակին պարզ և ընթեանելի:

Ստուգողական շարադրություն գրելու ժամանակ աշակերտներին չպետք է թույլ տալ օգտվել տեքստից կամ ձեռնարկներից:

Աշակերտները գրելուց առաջ կարող են կազմել շարադրության նախագիծը (պլան), բայց սկագրություն կատարելը պետք է արգելվ:

Շարադրությունը գնահատելիս պետք է հաշվի առնել.

ա) Թեմայի հասկանալը և այն զարգացնելը.

բ) Բովանդակության համապատասխանելը պլանին.

գ) Մտքերի տրամաբանական հետևողական շարադրանքն ու պարզությունը.

դ) Շարադրության առանձին մասերի կապը.

ե) Մտքերը հիմնավորելու, փաստարկելու, մեջբերումներ կատարելու հմտությունը.

դ) Մտքերը ճիշտ արտահայտելու համար համապատասխան բառեր գտնելու կարողությունը.

է) Պատկերավոր արտահայտությունների օգտագործումը.

ը) Շարահյուսական և ուղղագրական գրագիտության աստիճանը:

Շարադրությունները պետք է գրված լինեն մաքուր, խնամքով և միանգամայն պարզ ու ընթեռնելի: Աշակերտները պետք է համոզված լինեն, որ անինամ ու անմաքուր կերպով կատարած աշխատանքն ավելի ցածր գնահատական կստանա, քան մաքուր և ինամքով կատարած աշխատանքը:

Շարադրությունների սխալների հաշվառման ժամանակ պետք է նկատի ունենալ:

ա) Թեմայի սխալ հասկանալը, թեմայի ըլլանակներից դուրս գալը.

բ) Հիմնական առանցքի բացակայությունը, առանձին հարցերի ցագությունը.

գ) Նյութը պահանջորել չլարողանալը, աշխատանքի մասերի անհամաշախությունը:

դ) Հիմնական գրույթներն առանձնացնել և հստակ կերպով փաստարկել չկարողանալը:

ե) Մտքերը պարզ և հասկանալի կերպով արտահայտել չկարողանալը: Նյութից անհրաժեշտ կտորներն առանձնացնել և այն մի լրիվ ամբողջություն դարձնել չկարողանալը:

դ) Լեզվական անհարթությունները.

է) Սխալ դարձվածքները.

ը) Պատկերավոր արտահայտությունների սխալ կամ անհջող, անտեղի գործածությունը.

թ) Բառերի բացթողում.

ժ) Ավելորդ, անտեղի բառերի գործածություն.

ժա) Միատեսակ բառերի անտեղի կրկնություն:

Շարադրության համար նշանակվում է միայն մեկ գնահատական: Գնահատան ժամանակ հաշվի է առնվում թե բովանդակությունը, թե գրագիտությունը:

Այն դեպքում, եթե շարադրության առանձին կողմերի որակի միջև գոյություն ունի խիստ տարբերություն, օրինակ՝ բովանդակությունը լավ է, իսկ ուղղագրությունն ու կետադրությունը՝ վատ, գնահատելիս պետք է ավելի շատ հիմնվել գրագիտության վրա, իսկ բովանդակության որակը հաշվի առնել գրականության գնահատականի համար:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

8—10-րդ ԴԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Գերազանցությունը կամ շարադրությունը, որը բարգարում է հետևյալ պահանջներին.

ա) Շարադրությունը պարունակում է թեմայի լրիվ պատասխանը, նյութը պլանավորված է, աչքի է ընկնում մտքերը հիմնավորելու և փաստարկելու, եզրակացություն ու ընդհանուրացումներ անելու, գրական երկի տեքստը տեղին օգտագործելու հմտությունը.

բ) Շարադրության մեջ դրսեորդած է երկը լուրջ կերպով հասկանալու աշակերտի կարողությունը:

գ) Շարադրությունը գրված է գրական լեզվով, առանց շարահյուսական սխալների.

դ) Ուղղագրական սխալներ չկան, իսկ ոչ կոպիտ կետագրական սխալներն էլ 2-ից չեն անցնում.

Լավ.—գնահատվում է՝

ա) Երբ շարադրությունն իր բովանդակությամբ արժանի է «գերազանցի», բայց աշակերտը կատարել է մեկ ուղղագրական և մինչեւ 4 կետագրական սխալ:

բ) Երբ շարադրությունն արժանի է «գերազանցի», բայց կան 1—2 շարահյուսական սխալներ:

գ) Երբ շարադրությունը գրված է գրական լեզվով և ցույց է տալիս գրական նյութի կամ տեքստի լավ գիտենալը, բայց նյութը ոչ հաջող պլանավորելու հետևանքով շարադրության որոշ մասեր աչքի են ընկնում իրենց անհամաշափությամբ:

Միջակ.—գնահատվում է՝

ա) Երբ աշակերտը թեև նյութը գիտե, հիմնականում ճիշտ է լուսաբանել թեման, բայց կատարել է «միջակ»-ի նորմային համապատասխան քանակությամբ ուղղագրական և կետագրական սխալներ.

բ) Երբ աշակերտը վերլուծական շարադրությունը գրելիս չի կարողացել դասագրքի սահմաններից դուրս գալ, և շարադրությունը հանդիսանում է, ըստ էության, դասագրքի նյութի վերաշարադրումն այլ խոսքերով.

գ) Երբ աշակերտը հիմնականում ճիշտ պատասխան է տվել թեմային, բայց իր դրույթները հիմնավորելու ժամանակ մեջ բերումներն անհաջող է կատարել:

դ) Երբ շարադրության առանձին մասերի միջև գոյություն ունեն անհամաշափություն և ցրվածրություն, որ ցույց է տալիս աշակերտի սահմանափակ կարողությունը նյութը պլանավորելու դուժում:

Վատ.—գնահատվում է, երբ՝

ա) Շարադրությունն աչքի է ընկնում իր անպլանայնությամբ և մտքերի հիմնավորման բացակայությամբ.

բ) Աշակերտը չի հասկացել շարադրության թեման և, ինչպես հարկն է, չի զարգացրել այն.

գ) Աշակերտը դրսեորել է իր շարահյուսական և ուղղագրական անդրագիտությունը.

Շատ վատ.—գնահատվում է, երբ՝

ա) Շարադրությունը չի համապատասխանում թեմային և դրսեորում է աշակերտի շարահյուսական և ուղղագրական անդրագիտությունը.

բ) Շարադրությունը գուցե և կարելի էր գնահատել «վատ», բայց աշխատանքը կատարված է անփույթ, կեղտոտ և անընթեռնելի:

գ) Շարադրությունն ապացուցում է, որ աշակերտը չի տես ոչ միայն գրական տեքստը, այլև դասագրքի մշակած նյութը:



Պատ. Խմբագիր՝ Ք. Ներսիսյան

Սըրագրիչ՝ Վ. Պողոսյան

Կոնֆրոնտ սըրագրիչ՝ Մ. Պարոնիկյան

Վե 2490, հատ. № 90, պատ. № 269, տիրաժ 2000

Հունհետափ տպարան, Երևան, Տերյան № 127

ՀՀ Ազգային գրադարան



NL0229231

47. 458